

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N-----

„-----“, -----2015թ.

**«ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ ԱՐՄԵՆ ԵՐԻՑՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Երիցյան

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի՝ «Հիշում եմ և պահանջում» կարգախոսը իմաստավորելու և արժևորելու, Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը հավերժացնելու, հանրապետության ուսումնական հաստատություններում Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգված անցկացնելու համար՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ մարզպետներին՝ տեղերում միջոցառումները կազմակերպելու համար:

Կից ներկայացնում եմ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների ծրագիրը և անցկացման ընթացակարգը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Կապ.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777



ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառումը	Իրականացնողներ և մասնակիցներ	Ժամկետներ
1.	«Պատմիր քո պատմությունը»	Ավագ դպրոցների սովորողներ 8-12-րդ դասարաններ	Մարտի 1-ից ապրիլի 1-ը
2.	Անմոռուկների պատրաստում	Հանրապետության բոլոր դպրոցների 5-12-րդ դասարանների սովորողներ, դպրոցներից մեկում՝ ՀՀ ԿԳ նախարարի մասնակցությամբ	Մարտի 24
3.	Դաս նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրին	Մանկավարժների ներկայացմամբ՝ 5-12-րդ դասարանի սովորողներ, դպրոցներից մեկում՝ ՀՀ ԿԳ նախարարի մասնակցությամբ	Ապրիլի 17
4.	Ազգերի ցեղասպանությունների /Եղեռն, Սեյֆո, Հոլոքոստ, Մեզալի, Ռուանդական, Դարֆուրի բախումներ/ մասին դաս	Մանկավարժների ներկայացմամբ՝ 10-12-րդ դասարանների սովորողներ, դպրոցներից մեկում՝ ՀՀ ԿԳ նախարարի մասնակցությամբ	Սեպտեմբեր
5.	«Հիշում եմ և պահանջում» վերնագրով բաց դասեր, միջոցառումներ տարվա ընթացքում	Հանրապետության դպրոցներ	Տարվա ընթացքում

Հ. Գ. Նշված միջոցառումներն անցկացվելու են դասերից հետո՝ դասղեկական ժամերին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների անցկացման ընթացակարգ

1. «Պատմիր քո պատմությունը»

1915 թվականի Հայոց ցեղասպանության հետևանքը դարձավ հայ ժողովրդի հայրենագրկումը իր բնօրրան Արևմտյան Հայաստանից: Բազմաթիվ ընտանիքներ կորցրեցին իրենց հարազատներին, բարեկամներին, թողեցին իրենց պապական տներն ու բռնեցին հարկադրված գաղթի ճանապարհը: Ճանապարհ, որի տարբեր հատվածներում նույն ընտանիքի անդամները կորցրեցին միմյանց: Նույն ընտանիքի, գերդաստանի հայորդիները հայտնվեցին տարբեր երկրներում, դարձան տարբեր երկրների քաղաքացիներ, և ամեն երկրի կառավարություն նրանց ազգանունը գրեց տարբեր կերպ, տարբեր հնչերանգներով:

armeniangenocide100.org կայքում գործում է առանձին մի բաժին՝ «Պատմիր քո պատմությունը» խորագրի ներքո: Այս հարթակում ամեն հայորդի, աշխարհի որ ծայրում էլ որ գտնվի, կարող է համայն հայությանը և կայքի այցելուներին պատմել իր նախնիների պատմությունը: Այս հարթակը բացառիկ հնարավորություն է տալիս նույն գերդաստանի, նույն ընտանիքի սերունդներին՝ գտնել միմյանց:

Պարտադիր դաշտերը լրացնելուց հետո, որոնք են՝ պատմողի տվյալները, վերապրողի տվյալները, ժամանակաշրջանը, պատմությունը ներբեռնվում է կայքում, ապա և հասանելի դառնում բոլոր այցելուների համար: Նախատեսված է, այսօր իրենց ժառանգած ազգանունից բացի, գրանցել նաև բոլոր այն ձևափոխված ձևերը, որոնք գոյություն են ունեցել նախկինում կամ կարող են գոյություն ունենալ այսօր: Սա բացառիկ մի շտեմարան է, որը աշխարհասփյուռ հայերին հնարավորություն կտա գտնել հարազատներին և բարեկամներին:

Նշված կայքի մասին դասուղեկները պետք է տեղեկացնեն սովորողներին և բացատրեն, որ նրանք իրենց լսած իրական պատմությունները կարող են պատմել՝ գրանցվելով նշված կայքում: Պատմությունները կարելի է շարադրել թե՛ դպրոցից, թե՛ տնից՝ ծնողների օգնությամբ: Պատմությունները չեն գնահատվելու:

2. Անմոռուկների պատրաստում

Հանրապետության բոլոր դպրոցների 5-12-րդ դասարանների սովորողները, 2015 թվականի մարտի 24-ին, դասուղեկի ժամին, պետք է պատրաստեն Անմոռուկներ (պատրաստման ձևին կարելի է ծանոթանալ <http://youtu.be/PrrjTuKuXZE> հղմամբ): Յուրաքանչյուր սովորող պետք է պատրաստի 6 Անմոռուկ, ապա հակառակ կողմում նշի իր տվյալները (անունը, ազգանունը,

մարզը, դպրոցը, դասարանը): Պատրաստված Անմոռուկները պետք է դասավորել տուփերում(առաքման վայրը կտեղեկացվի լրացուցիչ): Անմոռուկները կնվիրվեն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Հայաստան ժամանած հյուրերին: Պատրաստվելու են 1.500.000 Անմոռուկներ:

3. Դաս նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրին 2015 թվականի ապրիլի 17-ին բոլոր դպրոցներում անցկացվելու է դաս՝ նվիրված նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրին. 5-12-րդ դասարանի սովորողների համար դասղեկներն ընթերցելու են Հռչակագիրը: Հռչակագիրը կարող է ընթերցել նաև միջոցառմանը մասնակից պատվավոր հյուրերից մեկը:

4. Ազգերի ցեղասպանությունների (Եղեռն, Սեյֆո, Հոլոքոստ, Մեգալի, Ռուանդական, Դարֆուրի բախումներ) մասին անցկացվելու դաս. պատմության մասնագետները սովորողներին կներկայացնեն աշխարհում տեղի ունեցած ցեղասպանությունների պատմությունները՝ համեմատելով Մեծ Եղեռնի հետ:

5. Տարվա ընթացքում անցկացնել «**Հիշում եմ և պահանջում**» վերնագրով բաց դասեր, գրական-երաժշտական հանդեսներ, հուշ-երեկոներ, միջոցառումներ՝ նվիրված Հայոց հարցի պատմությանը, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին: